

ք. Երևան

«----» -----ի 2011թ.

ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս ՀՀ Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Լ.Լալայանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում՝ Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի մոտ տեղադրել «LSFinance 5.0» ավտոմատացված ծրագրային համակարգը (այսուհետ՝ ԱՀ):

1.2 ԱՀ-ի ներդրումը ներառում է.

- «LSFinance 5.0» ավտոմատացված ծրագրային համակարգի տեղադրում Պատվիրատուի մոտ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Սույն Պայմանագրի 3 կետով նշված ժամկետներում և կարգով ստանալ կատարված աշխատանքների գումարը:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1 Ներդրման ավարտին ստորագրել աշխատանքների հանձնման-ընդունման ակտը:

2.3.2 Ներդրման դիմաց Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն Պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքների իրականացումը:

3. Աշխատանքների արժեքը և հաշվարկման կարգը

3.1 Սույն Պայմանագրով նախատեսված ներդրման արժեքը մեկ աշխատանքային կայանի համար կազմում է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Վճարումը սկսվելու է 2011թ. առաջին եռամսյակում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների՝ Կողմերի երեքական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով իրենց վրա վերցրած պարտավորությունների ավարտը:

6. Ֆորս-մաժոր

6.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,

ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ դրույթներ

7.1 Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները և հաշվարկային հաշիվները

Պ Ա Տ Վ Ի Ը Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ը Ո Ղ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150, 900011003168
ՀՎՀՀ 02578338

«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք.Երևան, Բուզանդի 1/3, 7 հարկ
«ՎՏԲ – Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16048200435700
ՀՎՀՀ 01202055

(ստորագրություն)

Կ.Տ

(ստորագրություն)

Կ.Տ